



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հայաստանը հարուստ երկիր չէ էներգակիրների առումով: Սեփական էներգակիրներից է սահմանափակ քանակությամբ հիդրոէներգիա (պոտենցիալը ջրային էներգապաշարները կազմում են 21.8 մլրդ կՎտ.ժ, այդ թվում՝ խոշոր և միջին գետերինը՝ 18.6 մլրդ կՎտ.ժ, փոքր գետերինը՝ 3.2 մլրդ կՎտ.ժ), գյուղական բնակավայրերում՝ վառելափայտը և քիչ քանակությամբ բիավառելիքը (աթար), հողմային էներգիան, ունի տորֆի (15 հանքավայր և հանքերևակում Գեղարքունիքի, Լոռու և Արագածոտնի մարզերում) և գորշ ածխի ոչ արդյունաբերական նշանակության հանքավայրեր և հանքերևակումներ (8 հանքավայր և հանքերևակում Գեղարքունիքի Լոռու, Սյունիքի և Շիրակի մարզերում):

ՀՀ բնական գազ ներկրվում է Ռուսաստանի Դաշնությունից և Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ լիցենզավորված 3՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «Տրանսգազ» ՍՊԸ, «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ կազմակերպությունների կողմից: Բնական գազի հիմնական բաշխման օպերատորն է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն:

Ըստ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի պաշտոնական կայքի՝¹ 2023թ. ընկերության կողմից ՀՀ է ներկրվել 2 444,8 մլն մ³ բնական գազ: Նույն ժամանակահատվածում բաշխման համակարգում իրենց կողմից իրացված գազի ծավալը կազմել է 2 357,3 մլն մ³, որից՝ բնակչություն՝ 808,2 մլն մ³, էներգետիկա՝ 510,0 մլն մ³, արդյունաբերություն՝ 293,7 մլն մ³, ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)՝ 412,1 մլն մ³, այլ սպառողներ՝ 333,3 մլն մ³: Միջուկային վառելիքը նույնպես ներկրվում է Ռուսաստանի Դաշնությունից:

ՀՀ-ում էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց թիվը 2024թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմում է 374, որոնցից 55-ի գործունեությունը կամ դադարեցված է, կամ կասեցված, իսկ էլեկտրական և ջերմային էներգիայի /համակցված/ արտադրության լիցենզիա ունի 10 կազմակերպություն, հողմային էներգիայի արտադրության համար՝ 7 կազմակերպություն²:

2021թ. հունվարի 14-ի 48 – Լ որոշմամբ ՀՀ կառավարությունն ընդունել է ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040 թվականը) (այսուհետ Ռազմավարական ծրագիր)³: Ըստ Ռազմավարական ծրագրի՝ էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններն են՝ վերականգնվող էներգետիկան, էներգախնայողությունը, Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացումը, ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման ժամկետի, ներառյալ երկարաձգումների ավարտից հետո գործող կայանի հարթակում փոխարինող հզորության էներգաբլոկի կառուցում, էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ձևավորումը, շուկայի ազատականացումը, Հյուսիս-հարավ տարանցիկ միջանցքի կառուցման ծրագիրը, որն ընդգրկում է Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծերը և ենթակառուցվածքները:

Ատոմային էներգետիկա՝ «Հայկական ԱԷԿ» -ը 2023թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարել է 1 912.0 մլն.կվտ/ժամ (ընդհանուրի 32,567%-ը):

ՀՀ-ում էլեկտրաէներգիա է արտադրում «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ն: ՀԱԷԿ-ը բաղկացած է սեյսմիկ նախագծով կառուցված 2 միավորից՝ WWER-440 (V-270) տիպի ռեակտորների հիման վրա: ՀԱԷԿ-ի №1 բլոկը շահագործման է հանձնվել 1976 թ. դեկտեմբերի 22-ին /փակվել է 1989-ի փետրվարի 25-ին և մինչ այժմ գտնվում է երկարատև կանգի ռեժիմում: Այս էներգաբլոկի վերագործարկում չի նախատեսվում: №2 բլոկը շահագործման է հանձնվել՝ 1980թ. հունվարի 5-ին /վերագործարկվել է 1995թ. նոյեմբերի 5-ին: №1 և №2 բլոկների արտադրական նախագծային էլեկտրական էներգիան յուրաքանչյուրի համար կազմում է 407,5 ՄՎտ, շահագործման նախագծային ժամկետը՝ 30 տարի: Ներկայում №2 բլոկն ապահովում է հանրապետությունում սպառված էլեկտրաէներգիայի 35-38%-ը: ՀԱԷԿ-ին միջուկային վառելիքը մատակարարում է «ՌոսԱտոմ» ռուսական պետական կորպորացիայի մաս կազմող «ТВЕЛ» միջուկային վառելիքի ընկերությունը: Հայկական ԱԷԿ-ի անվտանգ շահագործման, ինչպես նաև ռադիոակտիվ թափոնների անվտանգ թաղման համար կառավարումն ու պատասխանատվությունն ամբողջությամբ վերապահված են ՀՀ կառավարությանը, որին պատկանում են ՀԱԷԿ-ի 100% բաժնետոմսերը: Ձեռնարկությունն՝ ինքն, էլ է պատասխանատվություն կրում:

Ռազմավարական ծրագրով ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի՝ 2026 թվականից հետո շահագործման ժամկետի երկարացումը Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկն է, իսկ շահագործման լրացուցիչ ժամկետի ավարտին նոր ատոմային կայանի շահագործման հանձնումը՝ հիմնական նպատակը:

ՀՀ կառավարության 2023թ. սեպտեմբերի 14-ի N 1597 - Ա որոշմամբ հաստատվել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի №2 էներգաբլոկի շահագործման ժամկետը և ծրագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման և կատարման պլանը: Այս որոշման ընդունումը հիմնավորվում է մի քանի տեսանկյունուց, որոնք են՝ էներգետիկ ռեսուրսների դիվերսիֆիկացիան, ներկրվող բնական գազից կախվածության նվազեցումը, արտանետումների կրճատումը, միջուկային էներգաբլոկով էներգետիկ համակարգի հաճախականության անվտանգության երաշխիքի ապահովումը, էներգետիկ անկախության մակարդակի

¹ <https://armenia-am.gazprom.com/press/news/2024/01/>
² <https://www.psrc.am/uploads/files/%D4%B7%D5%AC%D5%A5%D5%AF%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D4%B7%D5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D5%AB%D5%A1/%D4%BC%D5%AB%D6%81%D5%A5%D5%B6%D5%A6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE%20%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/KAVQVERJN%2012%E2%80%A404-24.pdf>
³ <https://www.arlis.am/>

բարձրացումը, մինչև 2026 թվականն այլ փոխարինող հզորությունների կառուցման անիրատեսական լինելը, նոր էներգաբլոկի շահագործման հանձնման իրատեսական լինելը 2034-2036 թվականների ընթացքում, ինչպես նաև Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ռեակտորի իրանի՝ վերջին տարիներին իրականացված թրծաթողման աշխատանքների կատարումից հետո որոշակի աշխատանքների իրականացման պայմաններում մինչև 2039 թվականը ռեակտորի շահագործման հնարավորությունը: ՀԱԷԿ-ի ռեակտորի անվտանգ շահագործումն ապահովող միջոցառումների արդյունավետությունն արդեն իսկ տալիս է իր արդյունքները: Մասնավորապես, դրա ապացույցն է 2024թ. օգոստոսի 30-ին անձանագրած կայծակից հետո վթարային կանգառի ռեժիմով էներգահամակարգից անջատումը:

Նոր ատամակայանի կառուցման համար ՀՀ կառավարությունը քննարկում է տարբեր սցենարներ:

2023թ. «Հայկական ԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարված էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալը կազմել է 1 912.0 մլն.կվտ/ժամ (կամ ընդհանուր մատակարարված 5 870,9 մլն կվտ/ժամ էներգիայի 32,567%-ը: 2023 թվականի ընթացքում Հայկական ատոմային էլեկտրակայանում փաստացի արտադրվել է 2.709 մլրդ կՎտ/ժ էլեկտրաէներգիա՝ պլանային 2.668 մլրդ կՎտ/ժ փոխարեն (շուրջ 41 մլն կՎտ/ժ ավելի, 101.54%): Նույն տարում ՀԱԷԿ-ը փաստացի առաքել է նախատեսվածից շուրջ 56.7 մլն կՎտ/ժ ավելի էլեկտրաէներգիա (կատարումը՝ 102.31%)⁴:

Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրական հզորությունը 2023 թվականին կազմել է 4203.29 ՄՎտ, ներառյալ ատոմային, հիդրո և ջերմային կայանները:

Հայկական ատոմային էլեկտրակայանի արտադրանքը կազմել է ընդհանուր տարեկան արտադրանքի 32%-ը:

Ջերմային և խոշոր հիդրոէլեկտրակայաններն արտադրել են ընդհանուր տարեկան արտադրանքի 55%-ը,

Վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմամբ կայանների արտադրանքը (հիմնականում փոքր հիդրոկայաններ և ՖՎ կայաններ), կազմել է մնացած 13%-ը:

Արևային էներգետիկա

2023թ. արևային էլեկտրակայանները «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին մատակարարել են 377,5 մլն.կվտ/ժամ էլեկտրաէներգիա (ընդհանուրի 6,4 %)-ը⁵:

Համաձայն 2023թ. հոկտեմբերի 26-ի ՀՀ կառավարության 48-Լ որոշման՝⁶ ՀՀ-ն նպատակ ունի ավելացնել վերականգնվող էներգետիկայի հզորությունը և մինչև 2040 թ-ն այն հասցնել 2000 ՄՎտ-ի, որից 1500 ՄՎտ-ն արևային, իսկ 500 ՄՎտ-ն հողմային էներգետիկայի հաշվին: Փոքր հիդրոէներգետիկայի հզորությունը նախատեսվել է հասցնել 430 ՄՎտ-ի: Արդյունքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի համախառն վերջնական սպառման մեջ 2030 թ-ին, ներառյալ խոշոր հիդրոէլեկտրակայանները կհասնի շուրջ 50%-ի, իսկ մինչև 2040 թ-ը շուրջ 60%-ի:

Ռազմավարական ծրագրի իրականացման համար, որտեղ արևային էներգետիկան համարվում է առաջնահերթային, ՀՀ-ում ստեղծված է բարենպաստ բիզնես միջավայր, ինչը նպաստում է նոր ներդրումների ներգրավմանը:

Վերջին տարիներին արևային էներգետիկայի զարգացումը պայմանավորված է ՀՀ-ում արևային էներգիայի մեծ ներուժով (1մ² հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կվտ/մ²), իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով:

2024թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ 205.49 ՄՎտ դրվածքային հզորությամբ թվով 61 արևային կայան և 353.65 ՄՎտ դրվածքային հզորությամբ թվով 25425 ինքնավար արևային էլեկտրակայան միացած է էլեկտրաէներգետիկական համակարգին:

Ինքնավար արևային էլեկտրակայանների տանիքային ՖՎ-ների հզորությունները 2024թ. հունվար ամսվա դրությամբ կազմել են 268.4 ՄՎտ⁷:

ՀՀ Գեղարքունիքի մարզում կառուցվում է արդյունաբերական մասշտաբի «Մասրիկ-1» արևային կայանը: Այն ունի նախագծային 55,0 ՄՎտ հզորություն և 147,45 մլն կվտ/ժ տարեկան առաքման ծավալ, նախատեսվում էր շահագործման հանձնել 2020 թվականին, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների պատճառով կայանի կառուցումը սահմանված ժամկետում չի ավարտվել:

Նախատեսվում է Հայաստանի համար ամենախոշոր՝ 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» կայանի կառուցումը Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Թալին և Դաշտադեմ բնակավայրերի վարչական տարածքներում: Կայանի կառուցումը նախատեսվում է ավարտել 2025 թվականի դեկտեմբերին:

⁴ <https://armeniannpp.am/hy/>

⁵ <https://www.psrc.am/uploads/files/%D4%B7%D5%AC%D5%A5%D5%AF%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D4%B7%D5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D5%AB%D5%A1/%D5%80%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2023/4-er/Ardir2.pdf>

⁶ <https://e-gov.am/gov-decrees/item/41448/>

⁷ <https://www.energyoperator.am/Reports/1-5.pdf>

2023թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարված էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքված՝ 5 870,9 մլն կվտ/ժամ ծավալում արևային էլեկտրակայանների մասնաբաժինը կազմել է 377,5 մլն.կվտ/ժամ, կամ ընդհանուրի 6,4%-ը:

Հիդրոէներգետիկա և փոքր ՀԷԿ-եր

Ռազմավարությունն այս ոլորտում նախատեսում է ՀՀ ամբողջ հիդրոէներուժի իրացում՝ ապահովելով գոյություն ունեցող երկու խոշոր՝ Սևան-Հրազդան (561.4 ՄՎտ հզորությամբ) ու Որոտան (404.2 ՄՎտ հզորությամբ) հիդրոէլեկտրակայանների համալիրների ներուժը, կառուցելով երեք նոր խոշոր ՀԷԿ-եր՝ «Մեղրի» ՀԷԿ-ի (Արաքս գետի վրա՝ մոտ 100 ՄՎտ հզորությամբ, շուրջ 700 մլն. կվտ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ), «Շնող» ՀԷԿ-ի (Դեբետ գետի վրա՝ մոտ 75 ՄՎտ հզորությամբ, շուրջ 300 մլն. կվտ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ) և «Լոռի-բերդ» ՀԷԿ-ի (Ձորագետ գետի վրա՝ մոտ 66 ՄՎտ հզորությամբ, շուրջ 200 մլն. կվտ էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությամբ) որպես պետական նշանակության ծրագրեր, ինչպես նաև կօգտագործվի փոքր ՀԷԿ-երի ներուժը:

Փոքր հիդրոէլեկտրաէներգետիկա

2023 թվականին ՓՀԷԿ-երը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարել են 503,7 մլն.կվտ/ժամ էլեկտրաէներգիա (ընդհանուրի 8,58%-ը),

Ռազմավարական ծրագրով նախատեսվում է ՓՀԷԿ-երի ընդհանուր դրվածքային հզորությունը 380 ՄՎտ-ից հասցնել 430ՄՎտ-ի: Փոքր ՀԷԿ-երի կառուցման համար հիդրոռեսուրսը հիմնականում համարվում է սպառված: Ռազմավարական ծրագրում ներառված է միայն այն փոքր ՀԷԿ-երի կառուցումը, որոնց համար տրված է կառուցման լիցենզիա: Փոքր ՀԷԿ-երից էլեկտրաէներգիայի արտադրության համար պետության կողմից սահմանվել են արտոնություններ՝ արտադրված էներգիայի համար 15 տարվա գնման երաշխիք:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) 2022թ. նոյեմբերի 7-ից վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրաէներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի սակագների վերանայման գործընթաց է սկսել:⁸

2024թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունեն 190 ՓՀԷԿ՝ 402 016,1 կվտ ընդհանուր հզորությամբ և 925,5 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալով:

Նույն օրվա դրությամբ կառուցման փուլում են գտնվում 16 ՓՀԷԿ՝ 59 287,0 կվտ ընդհանուր հզորությամբ և 232,4 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալով:

2023թ. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարված էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքված՝ 5 870,9 մլնկվտ/ժամ ծավալում ՓՀԷԿ-երի մասնաբաժինը կազմել է 503,7 մլն.կվտ/ժամ, կամ ընդհանուրի 8,58%-ը:

Հողմային էլեկտրաէներգիա

Ռազմավարական ծրագրով նախատեսվում է մինչև 500 ՄՎտ հզորությամբ փոքր և համակարգային նշանակության հողմային էլեկտրակայանների կառուցում միայն մրցակցային սակագնային առաջարկների առկայության դեպքում:

2024թ. հունվարի 1-ի դրությամբ հողմային էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունեն 4 կայան՝ 4 230 կվտ ընդհանուր հզորությամբ և 3,95 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալով:

ՀՀ էներգետիկ քաղաքականության ոլորտում ՀՀ գործող հիմնական իրավակարգավորումները

ՀՀ-ում ստեղծվել են էներգետիկայի ոլորտի զարգացումն ապահովող օրենսդրական բավարար հենք: Մասնավորապես

1. ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48-Լ որոշում⁹

Որոշմամբ սահմանվել են էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթությունները՝

1. Վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում
2. Էներգախնայողության ներուժի հնարավորինս իրացում
3. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացում
4. Հյուսիս-հարավ տարանցիկ միջանցքի կառուցման ծրագիր

⁸ <https://www.psrc.am/contents/newsPress/on-starting-the-review-process-of-electricity-tariffs-delivered-from-electricity-generating-stations-using-renewable-energy-resources>
⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149279>

5. Էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացում

Նշված են տարածաշրջանային մակարդակով Իրանի և Վրաստանի հետ ունեցած ռազմավարական նշանակության էներգետիկ համագործակցության շրջանակները՝ էներգակիրների տարանցիկ փոխադրումների, էլեկտրաէներգիայի փոխհոսքերի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էներգետիկ շուկայի ձևավորմանը մասնակցության և ինտեգրման առումով:

2. «**Էներգետիկայի մասին**»¹⁰ ՀՀ օրենք, ընդունված 2001 թվականի մարտի 7-ին: Օրենքի նպատակը ՀՀ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է:

3. «**Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին**» ՀՀ օրենք¹¹, ընդունված 2004 թվականի նոյեմբերի 9-ին: Օրենքի նպատակը էներգախնայողության իրականացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է: Համաձայն օրենքի՝ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներն են՝ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացմանն ուղղված միջոցառումներում բնական ռեսուրսների արդյունավետ (խնայողաբար) օգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության խնդիրների գերակայության ապահովումը:

4. ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «**Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին**» N 398-Լ որոշում¹²

Ծրագրով կարգավորվում են 2022–2030 թթ. էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի բնագավառներում վարվող քաղաքականությունների ուղղությունների, նպատակների և դրանց գծով թիրախների սահմանման, ինչպես նաև սահմանված թիրախների ապահովման ուղղությամբ նախատեսվող հիմնական գործողությունների ու միջոցառումների հետ կապված հարաբերությունները: Ծրագրի նպատակը առաջիկա տասը տարիների ընթացքում Հայաստանի տնտեսության էներգաարդյունավետության բարելավումն է ու էներգախնայողության խրախուսումը: Նպատակներից է նաև վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ որպես էներգետիկ անվտանգության ու հուսալիության բարձրացման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման միջոց: Ըստ որոշման՝ Ծրագիրն իրականացվելու է երեք փուլով՝ 1) 2022-2024 թթ., 2) 2025-2027 թթ. և 3) 2028- 2030 թթ.: Ծրագիրը սահմանում է թիրախներ հետևյալ երկու ուղղություններով՝

- 1) վերականգնվող էներգետիկայի զարգացում,
- 2) էներգախնայողություն:

5. «**Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին**» ՀՀ օրենք¹³, ընդունված 25.12.2003թ.¹⁴: Օրենքով Հանրային ծառայությունները կարգավորող մարմնին լիազորվել են էներգետիկայի ոլորտի գործունեության լիցենզավորման, լիցենզիայի պայմանների սահմանման և դրանց վերահսկման, կարգավորվող սակագների սահմանման, գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող զարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրման գործառույթների իրականացումը:

6 «**Ստանդարտացման մասին**» ՀՀ օրենք¹⁵, ընդունված 08.02.2012թ.: Օրենքով ամրագրվել է, որ սահմանված կարգով պետք է ընդունվեն էներգախնայողության Ազգային ստանդարտներ՝ որոշակի էներգաարդյունավետության ցուցանիշներով:

7. «**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին**» ՀՀ օրենք¹⁶, ընդունված 09.06.2023թ.: Օրենքը, ի թիվս այլ ոլորտների, կարգավորում է նաև էներգետիկ ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից ներկայացվող գործունեությունների փաստաթղթերի ՇՄԱԳ գործընթացը:

9. «**Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին**» ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N666-Լ որոշում¹⁷:

2017 թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության, ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի միջև դրանց անդամ պետությունների միջև ստորագրվեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (ՀԳԸՀ/CEPA): Նպատակն է ամրապնդել Կողմերի միջև համապարփակ քաղաքական և տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների և սերտ կապերի

¹⁰ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150007>
¹¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=67719>
¹² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408>
¹³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90830>
¹⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90830>
¹⁵ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=74337>
¹⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408>
¹⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153164>

վրա, այդ թվում՝ բարձրացնելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը Եվրոպական միության քաղաքականությանը, ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին: Նպատակներից է ամրապնդել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտների, այդ թվում էներգետիկայի ոլորտում քաղաքական երկխոսության շրջանակները:

2. ՕՐԵՆՍԴԵՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը), Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 48-Լ որոշում և նրանում կատարված հետագա փոփոխությունները

Համաձայն ռազմավարության՝ ՀՀ կառավարության էներգետիկայի բնագավառի զարգացման տեսլականն է՝ էներգետիկայի բնագավառում սոցիալական, բնապահպանական և տնտեսական հավասարակշռված քաղաքականության իրականացումը՝ առավելագույնս ներգրավելով բնակչությանն ու գործարարներին այդ ռազմավարության նպատակներին հասնելու համար: Համաձայն որոշման՝ էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններն են՝

6. Վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործումը
7. Էներգախնայողության ներուժի հնարավորինս իրացումը
8. ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացումը
9. Հյուսիս-հարավ տարանցիկ միջանցքի կառուցման ծրագիրը
10. Էլեկտրաէներգետիկական շուկայի աստիճանական ազատականացումը

Ըստ որոշման էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը խարսխված է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման սցենարներների հաշվին ատոմային և վերականգնվող էներգետիկայի զարգացման, ջերմաէլեկտրակայանների արդիականացման, բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցի և բաշխման էլեկտրական ցանցի զարգացումների, էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման, տարածաշրջանային էներգետիկ համագործակցության, ջերմամատակարարման նոր մեխանիզմների ներդրման, գազամատակարարման, էներգախնայողության, թվային էներգետիկայի ներդրման, գիտելիքահենք էներգետիկայի ծրագրի մասին. պետական էներգետիկ ընկերությունների օպտիմալ կառավարման մեխանիզմների ներդրման վրա:

Համաձայն որոշման էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների նվազագույն ծախսերով զարգացման ծրագրի մշակման մեթոդիկան հնարավորություն է տվել էներգետիկ համակարգի մոդելավորման այնպիսի սխեմա, որը կապահովի էներգետիկական, տնտեսական և շրջակա միջավայրի զարգացման, ինչպես նաև կլիմայի փոփոխության խնդիրները հաշվի առնումը քաղաքականության մշակման ժամանակ:

ՀՀ կառավարությունն առաջնային է համարում էներգախնայողությունը որպես երկրի էներգետիկ անվտանգության, տնտեսական մրցունակության մեծացման և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև կլիմայի գլոբալ տաքացման բացասական ազդեցության նվազեցման միջոց:

Որոշմամբ հաստատված նոր ատոմային էներգաբլոկի հզորությունը՝ 1200 ՄՎտ արհեստականորեն գերազանահատված է: Այսպիսի հզորությամբ նոր ատոմակայանի/ների կառուցումը կպահանջի երկար տարիներ, իսկ կառուցման պարագայում կխաթարվի էներգոհամակարգը:

Ռազմավարության մեջ ՀՀ կառավարության 26 հոկտեմբերի 2023 թվականի N 1827-Լ որոշում¹⁸ կատարվել է փոփոխություն համաձայն որի՝ նոր ատոմակայանի ընտրության հարցում, տնտեսական նպատակահարմարության դեպքում, կդիտարկվեն նաև փոքր մոդուլյար ռեակտորներ, ինչը հնարավորություն կտա ունենալու էներգետիկ անվտանգության ավելի բարձր մակարդակ՝ նվազեցնելով նաև համակարգում պահուստային հզորությունների (երրորդային պահուստի) չափը:

Ըստ ռազմավարական ծրագրի՝ մինչև 2030թ. արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը էներգետիկ համակարգում նախատեսվում է հասցնել 15%-ի՝ 1.8 մլրդ կՎտ/ժ: Այդ նպատակով նախատեսվում էր 1000 ՄՎտ ընդհանուր հզորությամբ արևային՝ ներառյալ ինքնավար, ընդհանուր 100 ՄՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար էլեկտրակայանների կառուցում: ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1827-Լ որոշում¹⁹ կատարված փոփոխություններով նախատեսվում է էլեկտրական էներգիայի համախառն վերջնական սպառման մեջ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրված էլեկտրական էներգիայի, ներառյալ խոշոր հիդրոէլեկտրակայանների մասնաբաժինը մինչև 2030 թվականը հասցնել շուրջ 50% և շուրջ 60%՝ մինչև 2040 թվական:

Ռազմավարական ծրագրով նախատեսվում է փոքր հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) ընդհանուր

¹⁸ <https://www.arlis.am/>

¹⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=184420>

դրվածքային հզորությունը 380 ՄՎտ-ից հասցնել 430ՄՎտ-ի:

ՀՀ-ում փոքր ՀԷԿ-երի կառուցման համար հիդրոռեսուրսը հիմնականում սպառված է համարվում: Ռազմավարական ծրագրում ներառված է միայն այն փոքր ՀԷԿ-երի կառուցումը, որոնց համար տրված է կառուցման լիցենզիա:

Ծրագրով նախատեսվում է մինչև 500 ՄՎտ հզորությամբ փոքր և համակարգային նշանակության հողմային էլեկտրակայանների կառուցում, սակայն այստեղ արված է վերապահում: Կառուցումը թույլատրվում է միայն մրցակցային սակագնային առաջարկների առկայության դեպքում:

Ըստ ռազմավարական ծրագրի՝ 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ջերմաէլեկտրակայաններից գործում են՝ Հրազդեհ-ը՝ 410 ՄՎտ, Հրազդանի 5-րդ էներգաբլոկը՝ 467 ՄՎտ, Երևանի ՀՇԳՑ 1 էներգաբլոկը՝ 228.6 ՄՎտ հզորությամբ: Հրազդանի ՋԷԿ-ը ցածր արդյունավետության պատճառով նախատեսվում է հանել շահագործումից Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի և նոր կառուցվող Երևանի 2-րդ ՀՇԳՑ էներգաբլոկը շահագործման հանձնելուց հետո: Ներկայում Երևանի ՋԷԿ-ի տարածքում կառուցված է շոգեգազային ցիկլով կայանը, որի հզորությունը կլինի 254 ՄՎտ: «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը կառուցել է 2020-2021թթ-ին, շահագործման է հանձնել 2021թ-ի դեկտեմբերի 11-ին: Վերակառուցումից հետո կայանի միջին տարեկան հզորությունը կազմել է 254 ՄՎտ:

Ռազմավարական ծրագրով նախատեսված չէ ՋԷԿ-երից հրաժարում, քանի որ վերջիններս երկրի էներգահամակարգում կայուն էլեկտրաէներգիայի արտադրողների թվում են: 2019թ-ին նրանց մասնաբաժինը էներգետիկ համակարգում կազմել է 39.9 տոկոս:

Ներկայում շահագործվում են «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ն և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկը, որոնց մասնաբաժինն ընդհանուր էներգետիկ հաշվեկշռում 2023թ. կազմել է 11,63%, իսկ 2024թ. առաջին կիսամյակում՝ 13,27%:

ՀՀ էներգետիկ ոլորտի մինչև 2040թ. զարգացման ռազմավարության մոդելավորման հիմքը կառուցված է դեմոգրաֆիական փոփոխությունների, տնտեսական աճի, շուկայական գների, տեխնոլոգիական զարգացումների, էներգետիկ անվտանգության և դիվերսիֆիկացիայի ապահովման կարիքների, ինչպես նաև գոյություն ունեցող կայանների մաշվածքի միտումների վրա:

Սակայն նշված մուտքային տվյալներից և ոչ մեկի վրա չեն դիտարկվում կլիմայի փոփոխության և դրա հետևանքով նախորդ բաժիններում նկարագրված ազդեցությունները, ինչպես օրինակ՝ կայանների արտադրողականության անկումը, բնականոն ընթացքից ավելի արագ մաշվածքը, տարերային աղետների հետևանքով կրած տնտեսական կորուստները, պահանջարկի աճը ոչ միայն եկամուտների աճի ու տեխնոլոգիական հագեցման, այլ նաև փոփոխվող կլիմայական պայմաններում հարմարավետության ապահովման մարտահրավերների արդյունքում, և այլն:

Ռազմավարական ծրագրի ժամանակացույցով նախատեսված միջոցառումները կլրանալվեն, և մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը կներկայացվի վերջինիս վերանայված տարբերակը՝ 2025-2050 թվականների համար: Այն կներառի նաև ռազմավարության կարգավորման, սոցիալական և բնապահպանական ազդեցության գնահատականները, ինչպես նաև կներկայացնի թիրախային նոր ցուցանիշներ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասով: Նույն ժամանակ, յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ պարբերականությամբ կիրականացվեն ռազմավարության կատարողականի և ազդեցության գնահատականներ:

Որոշման ընդունման ժամանակ «կլիմայի փոփոխության» գործոնները չեն ներառվել, սակայն հետագա փոփոխություններով ներառվել են այդ գործոնները: Մասնավորապես.

1. Որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի III՝ « էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների զարգացում» գլխում 03.03.2022 թիվ 248-Լ, 16.09.22 թիվ 1428-Լ կատարված փոփոխություններում նշվում է՝ «էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների նվազագույն ծախսերով զարգացման ծրագրի շրջանակում ներկայացված կանխատեսումները և գնահատականները՝ կլիմայի գործալ տաքացման, ջրային պաշարների փոփոխման, ինչպես նաև էներգետիկ համակարգի վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ էական հանգամանքներով պայմանավորված նախատեսվում է վերանայել երկամյա պարբերականությամբ:

2. Որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի X՝ «էներգախնայողություն» գլխում 03.03.2022 թիվ 248-Լ փոփոխությամբ՝ «ՀՀ կառավարությունն առաջնային է համարում էներգախնայողությունը որպես երկրի էներգետիկ անվտանգության, տնտեսական մրցունակության մեծացման և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև կլիմայի գործալ տաքացման բացասական ազդեցության նվազեցման միջոց»:

Առկա բացեր

Կառուցման փուլում գտնվող մի շարք ՓՀԷԿ-եր նախատեսված են կառուցել ՀՀ կառավարության 08.04.2021թ. «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» 488-ն որոշմամբ սահմանված ցանկում ընդգրկված մի

շարք գետերի վրա, մասնավորապես՝ Ձորագետ գետ՝ «ԱՍԻՆՏԱՐ» ՍՊԸ-ի «Ձորագետ 4» փոքր ՀԷԿ, Արփա գետի Էլեգիս վտակ՝ «ՎՏՎ ԷՆԵՐՁԻ» ՍՊԸ-ի «Եղեգնուտ 2» փոքր ՀԷԿ, Էլեգիս և Սողանլու գետերի վրա՝ «ԷԼԻՍ ՀԷԿ» ՍՊԸ-ի «ԷԼԻՍ 2» փոքր ՀԷԿ, Արփա գետի Եղեգիս վտակ՝ «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» ՍՊԸ-ի «Տիգրան Մեծ 2» փոքր ՀԷԿ, Որոտան գետի և նրա ձախակողմյան վտակ՝ «ՈՐՈՏԱՆ ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ի «Որոտան-12» փոքր ՀԷԿ²⁰):

Առաջարկներ.

1. Վերանայել ռազմավարության ծրագիրն ըստ կլիմայական մարտահրավերների գերակայությունների:
2. Ռազմավարական ծրագրում ներառել դրույթներ էլեկտրաէներգիայի պահանջարկի աճի՝ ոչ միայն եկամուտների աճի ու տեխնոլոգիական հազեցման տեսակետից, այլ նաև փոփոխվող կլիմայական պայմանների տեսակետից դրանց փոփոխության վերաբերյալ:
3. Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման տեսլականը կառուցել՝ հաշվի առնելով ՀՀ էներգահամակարգի պիկային հզորության մեջ միջուկային էներգիայի մասնաբաժնի՝ միջազգայնորեն ընդունված թույլատրելի նորմերը:
4. Ռազմավարական ծրագրում տալ ՀՀ տնտեսական/արդյունաբերության զարգացման հեռանկարները, էներգետիկ համակարգի կայուն աշխատանքի ապահովման խնդիրները, տարածաշրջանի երկրներ՝ Իրան և Վրաստան էներգիայի արտահանման և պահանջարկի հիմնավորումները:
5. Ռազմավարության մեջ ընդգրկել կլիմայական նոր մարտահրավերների հետ կապված գեներացիոն հզորությունների կարիքները և պիկերի համահարթեցման միջոցառումները:

2. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները: Նպատակն է կարգավորել էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանել դրանց իրագործման մեխանիզմները: Ի թիվս այլի, պետական քաղաքականության հիմնական սկզբունքներում ամրագրվել են տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործման և դրան ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների կիրառման, խոցելի սպառողների շահերի պաշտպանության և շրջակա միջավայրի պաշտպանություն մասին սկզբունքները:

Օրենքի 6-րդ հոդվածը վերաբերում է միջուկային էներգետիկայի կարգավորումներին: Ըստ հոդվածի

- միջուկային տեղակայանքները և միջուկային նյութերը ՀՀ սեփականությունն են, սակայն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո միջուկային նյութերը և նոր կառուցվելիք միջուկային տեղակայանքները կարող են գտնվել իրավաբանական անձանց սեփականության ներքո
- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետոմսերը ՀՀ սեփականությունն են և ենթակա չեն մասնավորեցման
- միջուկային և ճառագայթային անվտանգության ապահովման կազմակերպական, իրավական և տեխնիկական համակարգերի ձևավորումն ու դրանց գործունեության վերահսկումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինները
- Միջուկային էներգետիկայի, շրջակա միջավայրի վրա նրա ազդեցության և անվտանգության հարցերը կարգավորվում են միջազգային պայմանագրերին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Օրենքը սահմանում է, որ նոր արտադրական հզորությունների, հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերի և տեղակայանքների կառուցման կամ գործող տեղակայանքների վերակառուցման (ընդլայնման) համար պետական սեփականություն հանդիսացող հողատարածքները տրամադրվում են առաջնահերթության իրավունքով: Էներգետիկայի ոլորտի կարգավորման լիազորությունները հիմնականում վերապահված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Խոցելի սպառողների շահերի պաշտպանության համար Հանձնաժողովին սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի դիմաց խոցելի սպառողների համար որպես սոցիալական օժանդակություն հատուկ սակագներ սահմանելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելու լիազորությունը վերապահված է սոցիալական աջակցության բնագավառում ՀՀ կառավարության լիազորած մարմնին:

Օրենքով տրված են վերականգնվող էներգետիկայի զարգացման խթանման մեխանիզմներ՝ լիցենզավորած անձանց համար հաստատուն սակագների սահմանում, պետություն-մասնավոր գործընկերության խրախուսման գործարքների կիրառում, սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձին էլեկտրական էներգիայի վաճառքի իրավունքի տրամադրում և այլն:

Առկա բացերը՝

²⁰

https://psrc.am/uploads/files/%D4%B7%D5%AC%D5%A5%D5%AF%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D4%B7%D5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D5%AB%D5%A1/%D4%BC%D5%AB%D6%81%D5%A5%D5%B6%D5%A6%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE%20%D5%A8%D5%B6%D5%AF%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/Ka ruc_Artad-VER-01-10-22.pdf

- Օրենքում չկան էներգետիկ քաղաքականության մեջ կլիմայի փոփոխության մարտահրավերների դիմակայության ու հարմարվողականության ներառման դրույթներ:
- էներգետիկ նպատակներով պետական սեփականություն հանդիսացող հողատարածքների առաջնահերթ տրամադրման դրույթն ունի հողային ռեսուրսների կորստի ռիսկ:
- Օրենքը չի սահմանում էներգետիկ տեղակայանքների կառուցման, վերակառուցման և շահագործման գործընթացում շրջակա միջավայրի պահպանման ապահովման նկատմամբ հսկող-վերահսկող պետական լիազորված մարմիններ:

Առաջարկ

ՀՀ կառավարության կողմից նախատեսվող էներգետիկայի ոլորտի նոր ռազմավարության ծրագրում անդրադառնալ էներգետիկ ոլորտում կլիմայի հնարավոր փոփոխության մարտահրավերներին և դրանց հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումներին, էներգետիկ կարիքների բավարարման համար պետական/մասնավոր սեփականություն համարվող հողատարածքների տրամադրման տնտեսագիտական գնահատման սկզբունքի կիրառմանը, էներգետիկ տեղակայանքների կառուցման, վերակառուցման և շահագործման գործընթացում շրջակա միջավայրի պահպանման ապահովման նկատմամբ հսկող-վերահսկող պետական լիազորված մարմինների սահմանմանը, դրանք ամրագրել «էներգետիկայի մասին» օրենքում:

3. «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք

Օրենքի նպատակը էներգախնայողության իրականացման և վերականգնվող էներգետիկայի զարգացման պետական քաղաքականության սկզբունքների և դրանց իրագործման մեխանիզմների սահմանումն է, որոնք ուղղված են ՀՀ տնտեսական և էներգետիկ անկախության ամրապնդմանը և դրանց հուսալիության աստիճանի բարձրացմանը, էներգախնայողությունը և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծմանը և ծառայությունների կազմակերպմանը, շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանը: Օրենքը կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարվել են մի շարք լրացումներ և փոփոխություններ և ներառվել նոր պահանջներ և կարգավորումներ:

4. «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք

Ըստ օրենքի՝ պետք է ընդունվեն էներգախնայողության Ազգային ստանդարտներ, որոնցով կսահմանվեն՝
 ա) էներգատեղակայանքների էներգաարդյունավետության ցուցանիշները
 բ) էներգետիկ ռեսուրսների արդյունահանման, արտադրման, վերամշակման, փոխակերպման, փոխադրման, պահեստավորման և սպառման էներգաարդյունավետության ցուցանիշները
 գ) շենքերի և կառուցվածքների ջեռուցման, լուսավորման, օդափոխության, ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական համալիրների էներգաարդյունավետության ցուցանիշները
 դ) արտադրական պրոցեսների էներգաարդյունավետության ցուցանիշները
 ե) էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շրջակա միջավայրի վրա ներգործության բնապահպանական ցուցանիշները:

5. ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին հավանություն տալու մասին» N 398-Լ որոշում

Ծրագրով նախատեսվում է երեք փուլով՝ 1) 2022-2024 թթ., 2) 2025-2027 թթ. և 3) 2028- 2030 թթ, բարելավել Հայաստանի տնտեսության էներգաարդյունավետությունն ու խրախուսել էներգախնայողությունը, ինչպես նաև ընդլայնել վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ որպես էներգետիկ անվտանգության ու հուսալիության բարձրացման, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցման միջոց): Հիմնական թիրախներից բացի՝ ծրագիրը սահմանում է թիրախներ հետևյալ երկու ուղղություններով

- 1) վերականգնվող էներգետիկայի զարգացում
- 2) էներգախնայողություն

Ըստ Ծրագրի՝ վերականգնվող էներգետիկայի զարգացումը ՀՀ-ում կապահովի ներմուծվող հանածո վառելիքից կախվածության նվազեցումը: Նշվում է նաև, որ միջուկային էներգիան ներկայում կազմում է առաջնային էներգիայի մատակարարման շուրջ 18 տոկոսը: Ծրագիրն ամրագրում է, որ ՀԱԷԿ-ից ստացվող միջուկային էներգիայի փոխարինումը վերականգնվող էներգետիկայով առաջիկա 10-15 տարիներին չունի այլընտանք տնտեսական շահավետության և ջերմոցային գազերի կրճատման տեսանկյունից:

Վերականգնվող էներգետիկայի հետագա զարգացումը դիտվում է ոլորտում էներգետիկ անկախության ու անվտանգության մակարդակի բարձրացման, ինչպես նաև սպառողներին էլեկտրաէներգիայի հուսալի և որակյալ մատակարարման ապահովման կարևոր երաշխիք: Ծրագրային ժամանակահատվածում հատուկ շեշտադրվելու է վերականգնվող էներգիայի արդիական աղբյուրների (արևային, հողմային, գեոթերմալ) օգտագործմամբ էլեկտրաէներգիայի արտադրության ընդլայնումը:

Ծրագիրը նպատակ է հետապնդում մինչև 2030թ. արևային էներգիայի արտադրության բաժինն ընդհանուրի մեջ հասցնել առնվազն 15 տոկոսի: Այս ցուցանիշի գծով սահմանված թիրախի ապահովման առումով կարևորվում է էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի գործարկումը, որոնք էապես

կբարձրացնեն էներգետիկ համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Ծրագրային ժամանակահատվածում նախատեսվում է գործարկել 300 ՄՎտ (1200 ՄՎտժ) հզորությամբ էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգեր:

Որոշման 2-րդ հավելվածով հաստատվել են էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թթ.) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցը, որն իր մեջ ներառում է.

1. **Վերականգնվող էներգետիկ** հզորությունների հետագա զարգացումը՝ 5 գործողություն (էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի կառուցման բիզնես մոդելների հայեցակարգի մշակում, էներգիայի կուտակիչ մարտկոցների համակարգերի պարագայում կիրառվող սակագնային քաղաքականության ուսումնասիրություն, գումարային 500 ՄՎտ հզորությամբ հողմային կայանների կառուցման նպատակով՝ քամու ներուժի ուսումնասիրություն և գնահատում, ինքնավար արևային կայանների պարագայում կիրառվող կարգավորումների ուսումնասիրություն և վերանայում, ավելցուկային էլեկտրաէներգիայի կուտակման համար ջրածնային էներգիայի տեխնոլոգիաների օգտագործման հնարավորության գնահատում): Հիմնականում կատարվելու են հնարավորությունների ուսումնասիրություններ և գնահատումներ:

2. **էներգախնայողությունը**՝ 6 գործողություն (Տնային տնտեսությունների հատվածում և հանրակրթության ոլորտում էներգասպառման ելակետային տարվա (2022 թ.) տվյալների հստակեցման նպատակով ներկայացուցչական հետազոտությունների իրականացում, Երևանում հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրում, Հայաստանում էլեկտրամոբիլների կիրառման խթանման, լիցքավորման ցանցի ներդրման և ընդլայնման հայեցակարգի մշակում, ՀՀ հանրակրթական դպրոցներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի (մինչև 2030թ) նախագծի մշակում, Հանրային օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր, Հաղորդակցության ռազմավարության և գործողությունների պլանի մշակում):

3. **էլեկտրական էներգիայի օգտագործման խթանումը**՝ 3 միջոցառում (էլեկտրական էներգիայով սնուցվող, էներգաարդյունավետ սարքավորումների օգտագործման ընդլայնմանը միտված մաքսային կարգավորումների փոփոխությունների նախագծի մշակում, էլեկտրական էներգիայի վերջնական սպառման ավելացմանը՝ ի հաշիվ բնական գազի վերջնական սպառման նվազեցման, միտված սակագնային կարգավորումների մշակում և ներդրում, էլեկտրական էներգիայով սնուցվող արդիական, էներգաարդյունավետ ջեռուցման համակարգերի ներդրման պետական աջակցության ծրագրի մշակում):

Հիմնականում կատարվելու են հնարավորությունների ուսումնասիրություններ և գնահատումներ՝ միտված էլեկտրական էներգիայով հանածո վառելիքի էներգիայի փոխարինմանը, ինչից ակնկալվող արդյունքն է ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը:

4. Կայուն զարգացման նպատակների շրջանակի հետագա տեղայնացում

1 գործողություն (Կայուն զարգացման նպատակների շրջանակի տեղայնացման (ազգայնացման) ուղղությամբ աշխատանքների իրականացում կայուն զարգացման 7-րդ նպատակի գծով):

5. էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի իրականացման հաջորդ փուլերի պլանավորում

Որոշմամբ հաստատված հավելված 1-ի 43-րդ կետի համաձայն՝ ծրագրային ժամանակահատվածում նախատեսվում է նախապատրաստել և իրականացնել խոշոր՝ 120 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային 5 կայանների կառուցման միջազգային մրցույթ: Այդ միջոցառման իրագործման համար, համաձայն նույն որոշման 2-րդ «Ծրագիր-ժամանակացույց» հանելվածի 1.4 կետի մինչև 2024 թվականի դեկտեմբեր էներգետիկ անկախության մակարդակի բարձրացման, պիկային պանջարակի բավարարման նպատակով ակնկալվում էր միջազգային կազմակերպությունների տեխնիկական աջակցություն շուրջ 100 միլիոն ԱՄՆ դոլար մասնավոր ներդրումներ: Սակայն ՀՀ կառավարության 21.12.23 թվականի N 2286-Լ որոշման հավելված 1-ի՝ 43-րդ և հավելված 2-ի 1,4 կետերը կորցրել են իրենց ուժը:

Որոշման ընդունման ժամանակ խոշոր՝ «Մարիկ-1» արևային ֆոտովոլտային կայանի համար (55 ՄՎտ հզորությամբ և 4.19 ԱՄՆ ցենտ կՎտժ ֆիքսված սակագնով) հայտարարվել էր մրցույթ, տրված է գործունեության լիցենզիա: Սակայն կայանը դեռ շահագործման չի հանձնվել /«ԷՖԱԸՎԻ ՄԱՍԸԻԿ» ՓԲԸ-ի կայանի կառուցման ժամանակահատված էր սահմանված 25.10.2018 թվականը, սակայն շինարարական աշխատանքները ձգձգվել են և որից էլնելով սահմանվել է նոր ժամկետ՝ 2022թ. հուլիսի 1-ի, սակայն այդ ժամկետը նույնպես չի պահպանվել, ինչի պատճառն, ըստ Ընկերության ներկայացրած պատճառաբանության՝ COVID-19 համավարակն ու հայ-ադրբեջանական սահմանին լարվածությունն ու պարբերական զինված բախումները: Դրանից էլնելով՝ ՀՀ կառավարության 2022թ. հունիսի 30-ի N 997-Ս²¹ որոշմամբ կայանի կառուցման իր 2018թ-ին կնքած Ծրագրի կազմակերպման և իրականացման մասին կառավարության աջակցության համաձայնագրի ժամկետը երկարաձգվել է ավելի քան մեկ տարով: Ներկայում ավարտի համար սահմանված ժամկետն է 01.11.2024 թվականը: Դրան համապատասխան Ընկերության՝ էլեկտրաէներգիայի արտադրության թիվ 625 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 15.11.2042թ: Ըստ կառավարության և Ընկերության

²¹ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=116901&fbclid=IwAR11yytPyLOBnjfZlxMbWmG5nuUGfjxiEFhUZvSu25QQfC8qB1FU5hC97Y>

միջև կնքված նոր պայմանագրի, եթե ընկերությունն այս ժամկետում էլ ավարտին չհասցնի աշխատանքները, ապա ստիպված կվճարի 1 միլիոն դոլար լրացուցիչ երաշխիքային անհետկանչելի գումար/:

Ելային տվյալների համար հաշվարկի հիմքում չեն դրվել «Մասրիկ-1»-ի հզորությունները:

Փաստացի որոշման ընդունումից հետո իրականացվել է միայն «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի (200 ՄՎտ հզորությամբ և 2.9 ԱՄՆ ցենտ կՎտժ ֆիքսված սակագնով) մրցույթ, որում հաղթել է Արաբական Միացյալ Էմիրությունների «Մասդար» ընկերության և Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի կողմից ստեղծված «Մասդար Արմենիա» ընկերությունը: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը 200 միլիոն ԱՄՆ դոլար է: «Այգ-1» կայանի կառուցումը հետաձգվել է մեկ տարով՝ 2024 թվականի դեկտեմբերի փոխարեն 2025 թվականի դեկտեմբեր:

Առկա բացերը

1. Էներգախնայողության բաժնում հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է հասարակական տրանսպորտին՝ անտեսելով բեռնափոխադրումներ իրականացնող և լեռնահումքային արդյունաբերության մեջ ներգրավված՝ բենզինով և դիզելային վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցների և սարքավորումների արդիականացման ուղղված միջոցառումների իրականացումը:

Առաջարկներ

1. Մշակել Ազգային էներգետիկ և կլիմայական ինտեգրված պլան, վերագնահատել ՀՀ էներգետիկ և կլիմայական պարտավորությունները՝ այն տեղափոխելով ավելի իրատեսական հարթակ:
2. Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներում, ի մասնավորի, էներգախնայողության ոլորտում ներառել բեռնափոխադրումներ իրականացնող, արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում, ինչպես նաև լեռնահումքային արդյունաբերության մեջ ներգրավված՝ բենզինով և դիզելային վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցների և սարքավորումների արդիականացման վրա:
3. Վերագնահատել էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներն ըստ կլիմայական մարտահրավերների առաջադրած գերակայությունների (օրինակ, ավելի մեծ ուշադրություն դարձնելով կենցաղային և արդյունաբերական մասշտաբի հովացման համակարգերին, արտաքին կլիմայական պայմանների տատանումների հետ կապված էներգոհամակարգերի համակարգային կորուստների նվազեցմանը և այլն):

4. «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՕ-150-Ն ՀՀ ՕՐԵՆՔ, ՈՒՇԻ ՄԵՋ Է 09.06.2023թ.

Նոր Օրենքով վերաշարադրվել և վերախմբագրվել է 2014թ-ից գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքը:

Համաձայն օրենքի՝ էներգետիկ ոլորտում Ա կատեգորիայի փորձաքննության ենթակա են՝ ատոմակայանի և նրա ենթակառուցվածքների գործունեությունը, ջերմային էլեկտրակայանները կամ 50 ՄՎտ կամ ավելի ջերմային հզորությամբ այլ այրման համար նախատեսված կայանքներ, 1 ՄՎտ և ավելի էլեկտրական հզորությամբ հիդրոէլեկտրակայաններ, Բ կատեգորիան ներառում է՝ կենսազազի կամ կենսազազով էներգիայի արտադրություն՝ մինչև 1 ՄՎտ և ավելի հզորությամբ հիդրոէլեկտրակայաններ, հողմաէլեկտրակայաններ՝ 5 ՄՎտ և ավելի ընդհանուր հզորությամբ, արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող կամ լողացող արևային կայանքներ:

Չնայած կատարված փոփոխություններին, այնուամենայնիվ, լրամշակված օրենքում առկա են հետևյալ բացերը.

1. Օրենքը չի պահանջում իրավաբանական անձանց կողմից իրենց արտադրական պրոցեսի, դրա ընթացքում առաջացած շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող աղտոտող նյութերի և օգտագործվող հումքի՝ միջուկային վառելիք, հիդրոռետուրս, ածխաջրածնային վառելիք, նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին առանձին իրավական ակտի ընդունում: Տրված է միայն «ինքնահսկում» եզրույթը, սակայն օրենքում այլևս այն չի հիշատակվում: Ինքնահսկում սահմանված է միայն ընդերքօգտագործողների համար՝ ՀՀ կառավարության 2018 թվականի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 191-Ն որոշմամբ:

2. Օրենքը չի ապահովում տնտեսական գործունեության կամ հայեցակարգի փորձաքննության գործընթացում գործունեության բացասական ազդեցությունները կրող բնակավայրի բնակիչների կարծիքի առաջնահերթությունը հասարակական լուսմաների ժամանակ:

Առաջարկ

1. Օրենքում ամրագրել ՇՄԱԳ-ի ենթակա գործունեության համար «ՇՄԱԳ-ի ենթակա գործունեության հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների

2. Օրենքում ամրագրել տնտեսական գործունեության կամ հայեցակարգի փորձաքննության գործընթացում գործունեության բացասական ազդեցությունները կրող բնակավայրի բնակիչների կարծիքի առաջնահերթության դրույթ:

3. Արդյունաբերական արևային էլեկտրակայաններին ներկայացվող պահանջները շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոտեցումը վերանայել՝ հատկապես կայանքների զբաղեցրած հողատարածքների մակերեսով գնահատելու մոտեցումը: Ա կամ Բ կատեգորիայի ընթացակարգերով կայանքների ՇՄԱԳ փորձաքննության անցկացման նպատակով սահմանել հողատարածքների մակերեսների միջակայքեր:

4.1. ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հանրության իրազեկման և հանրային լուսմների ծանուցման բովանդակությունը, հանրային լուսմների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները» N 2343-Ն որոշում

Որոշման նպատակն է ապահովել շահագրգիռ հանրության մասնակցությունը ՌԷԳ կամ ՇՄԱԳ-ի և փորձաքննության գործընթացներում որոշումների ընդունմանը: Ըստ հավելվածի 7-րդ կետի շահագրգիռ հանրության ներկայացուցիչը ցանկացած գրավոր և բանավոր առաջարկություն, դիտողություն և կարծիք կարող է ներկայացնել առանց դրանց հիմքում ընկած պատճառների հիմնավորման: Լուսմներն ունեն 2 փուլ՝ նախնական և հիմնական: Մեկից ավելի համայնքներում լուսմներ իրականացվելու դեպքում առնվազն մեկ համայնքի կողմից անհամաձայնությունը համարվում է նախատեսվող գործունեության վերաբերյալ անհամաձայնություն:

Առկա բացերը

Հստակեցված չէ ՇՄԱԳՓ օրենքով նախատեսված երկրորդ հանրային լսման դեպքում համայնքի կողմից վերջնական որոշում կայացնելու գործընթացը:

Հստակեցված չէ ՇՄԱԳՓ օրենքով նախատեսված հանրային լուսմներին համայնքի, խոշորացված համայնքների բնակիչների մասնակիցների թիվը, կամ ներկայացուցչական կազմը: Դրա չհստակեցումը հանգեցնում է հանրային լուսմների կազմակերպման կամայականության և չի ապահովում նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի իրական դիրքորոշումը:

Առաջարկություն

Հստակեցնել երկրորդ հանրային լսման դեպքում համայնքի կողմից վերջնական որոշում կայացնելու գործընթացը:

Հստակեցնել հանրային լուսմներին համայնքի, խոշորացված համայնքների բնակիչների մասնակիցների թիվը և ներկայացուցչական կազմը՝ խուսափելու կամայականություններից և ապահովելու նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի իրական դիրքորոշումը:

5.«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N666-Լ որոշում²²

Ճանապարհային քարտեզի մաս 5-ի գլուխ 2-ի 47-88 միջոցառումներն ուղղված են «Էներգետիկ համագործակցությունը՝ ներառյալ՝ միջուկային անվտանգությունը» խնդիրների լուծմանը: Ճանապարհային քարտեզի համաձայն՝ Հայաստանը նախատեսում է՝

- օրենսդրական և ինստիտուցիոնալ նախադրյալների ստեղծում (թիրախներ)՝ ՀՀ-ում ածխաջրածնային շարժիչային վառելիքներին այլընտրանք հանդիսացող էներգակիրների, ինչպես նաև «Էներգետիկ սերտիֆիկատների» և ըստ անհրաժեշտության այլ կարգավորումների կիրառման համար:
- Հայաստանում հիդրոակումուլիացիոն կայանի (ՀԱԿ) կառուցման համար նախագծանախահաշվային աշխատանքների և համեմատական վերլուծությունների իրականացում:
- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում, «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում, Շուկայի կանոններում, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում
- «Էլեկտրաէներգիայի անդրսահմանային փոխանակման համար ցանցին միանալու պայմանների կանոնակարգումը պետք է իրականացվի իրավական ակտերով
- Էներգետիկայի բնագավառի ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի լրամշակում /ՀՀ ՀՕԿՀ 2010թ. հունիսի 14-ի N365Ն որոշմամբ հաստատված կարգում փոփոխություններ և լրացումներ: Էներգետիկայի բնագավառի ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի լրամշակում

- Նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման մասով պարտավորություն սահմանող օրենսդրական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացում, եռակողմ համաձայնագրով նվազագույն պաշարների սահմանման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման ընդունում
- «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում
- «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում ներառել շենքերի էներգաարդյունավետության մասին պահանջը: /ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 426-Ն որոշմամբ ընդունվել է «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը», ինչպես նաև հանձնարարական համապատասխան գերատեսչությանը
- Էկոլոգիապես մաքուր և էներգաարդյունավետ ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործումը խթանելուն ուղղված նոր օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների ընդունում
- Ազգային մակարդակում 18 նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում

Եզրակացություն

1. Էներգետիկայի բնագավառում ընդունված իրավական ակտերը բավարար չափով չեն ապահովում ՀՀ բնական ռեսուրսների օգտագործման գործընթացում պաշտպանելու ազդակիր բնակավայրերի բնակիչների և քաղաքացիների առողջությունը և բարեկեցությունը, ինչպես նաև շրջակա միջավայրի հետ կապված ռիսկերը և ազդեցությունները: Չեն ապահովում էներգետիկ աղբատության կրճատումը:
2. Հայաստանի էներգետիկ քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերում սոցիալ-էկոլոգիական բաղադրիչը թույլ է ներկայացված: Ցանկալի է հավասարակշռված մոտեցում՝ հաշվի առնելով էներգետիկայի զարգացման օգուտներն ու պատճառված վնասը, ինչը կարող էր հանգեցնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ և կլիմայական քաղաքականության մեջ սոցիալական և բնապահպանական ոլորտում Եվրամիության մոտեցումների մոտարկմանը և մշակույթի ներդրմանը:
3. ՀԱԷԿ-ի գործունեության ոլորտում ընդունված ռազմավարությունն մեջ բացակայում է ՀԱԷԿ-ի ազդեցության գոտու բնակավայրերին «ազդակիր բնակավայրերի/համայնքի» կարգավիճակի տրման, ինչպես նաև դրանից բխող տուժած անդամներին սոցիալական երաշխիքների ապահովման դրույթները:
4. Թույլ է արտահայտված որոշումների կայացման և իրականացման բոլոր մակարդակներում սոցիալական հավասարության, այդ գործընթացներում կանանց մասնակցության սկզբունքների պահպանությունը:
5. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների կողմից էներգետիկայի ոլորտում մասնակցությունն ապահովելու համար հստակ մեխանիզմեր տրված չեն:
6. Էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ բնակչության ակտիվ դերակատարման ապահովման համար գործող իրավական ակտերում բնակչության իրազեկման միջոցառումների գործիքակազմը հստակ արտահայտված չէ: